ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» մարտ 2022թ. ՆՄՈ/204/2022

Ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՆՄՈ/365-2019 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «զ» ենթակետով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2003 թվականի օգոստոսի 27-ի N544 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՆՄՈ/365-2019 որոշման 1-ին կետով

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

հաստատված հավելվածի 15-րդ կետը լրացնել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ 6-րդ ենթակետով՝

«6) արգելվում է ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) օգտագործումը ՀՀ Արմավիրի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Недействительная подпись

VERIFIED OCSP 30.03.2022 16:45:19 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am